

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	էջ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ձեմժեմյան Հ. ՍԱՀԱԿ. — Զեռագիր շարակ- նոցները եւ անոց կանոնները	305
ԿՐՕՆԱԿԱՆ	
Տէր ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. — Քրիստոս գի- տութեան լոյսին առջեւ	297
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ. — Գեղի կամ Քեղայոյ բերդ	302
ԳՐԱԿԱՆ	
ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Յովհաննէս Թու- մանեան (ծննդեան 100ամեակին առիթով)	273
ՊՈՒՇԼԻԿԵԱՆ Հ. ՅՈՒՍԻԿ. — Երուանդ Օտեմն (ծննդեան 100ամեակին առիթով)	287
Կ. Վ. — Տէրեան, Վերլէն եւ ուրիշներ	313
ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Երկնային ղօղանջ (քերթումներ)	326
ՃԵԼԱԼԻԱՆ Հ. ՅԱԿՈԲ. — Կոմիտաս Վարդապետ (քերթումներ)	330
ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. — Կոմիտասեան (քերթումներ)	334
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ	
ԲՐՈՒՏԵԱՆ ՅԻՅԻԼԻԱՆ. — Կոմիտաս (ծննդեան 100ամեակին առիթով)	278
ԼԵԶՈՒԱԿԱՆ	
ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. — Ի սէր «Մե- ծասանց»ին	338
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
ԱԳՂԼԵԱՆ Հ. ՍԵՐՈԲԷ. — Ուխտաւորի աչքե- րով	322
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՔԻՐՈՍԵԱՆ Յ. — Բաժնի Տարեգիրք (կազմեց՝ Տանատ Պօղոսեան)	340
ՔԻՐՈՍԵԱՆ Յ. — Ակադեմիկոս Աշոտ Յովհան- նիսեանի մէկ նոր ելոյթը	342

SOMMAIRE

	PAGE
PHILOLOGIE	
DJEMDJEMIAN P. SAHAK. — Hym- naires en manuscrits et leurs conte- nus	305
RELIGION	
DER GHAZARIAN P. EPHREM. — Jé- sus-Christ d'après la science	302
HISTOIRE	
HOVHANNESSIAN P. MICHEL. — La forteresse de Kheghi	302
LITTERATURE	
DJANACHIAN P. MESROP. — Hov- hannès Toumanian (à l'occasion du centenaire de sa naissance)	273
BOUCHLIKIAN P. HOUSIK. — Yer- vant Odian (à l'occasion du cente- naire de sa naissance)	287
G. V. — Térrian, Verlaine et d'autres	313
HOVHANNESSIAN P. VAHAN. — Ca- rillon éternel (poésies)	326
DJELALIAN HAGOP. — Komitas Var- daped (poésies)	330
DJANACHIAN P. MESROP. — Suite «Komitas» (poésies)	334
ART	
PROUDIAN CECILE. — Komitas (à l'occasion du centenaire de sa nais- sance)	278
LINGUISTIQUE	
DER-NERSESSIAN P. N. — Pour l'a- mour du «Mezaskantch»	338
ECHO ARMENIEN	
AKELIAN P. S. — Témoignage d'un touriste en Arménie	322
RECENSIONS	
KURDIAN H. — Annales «Raffi» (com- pilé par Tadjat Poghossian)	340
KURDIAN H. — A propos de l'acadé- micien Achot Hovhannessian	342



1843 ~ 1969
ՃԻԷ. ՏԱՐԻ
•
ԹԻԻ 11 - 12

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXXVII^e année, 1969, N. 11 - 12

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Ծննդեան 100ամեակին ԱՌԻԹՈՎ)

1969 թումանեանի եւ Կոմիտասի տարի հռչակուած էր Հայաստանի եւ Հայկ. Սփիւռքի համար: Եւ այդպէս ալ եղաւ. տեղի ունեցան շքեղ տօնախմբութիւններ Մայր Հայրենիքի եւ Հայկ. Սփիւռքի զանազան զաղթալայրերու մէջ, զրեթէ ամէն տեղ՝ ուր ալ մը Հայեր յաջողեցան աղգային շունչով զիրար ջերմացնել:

Թումանեան եւ Կոմիտաս յորելինական տարին լիապէս լեցուցին: Տօնական ցոյցերէն զատ՝ մամուլը Հայաստանի մէջ եւ Սփիւռք՝ տարի մը ամբողջ զբաղեցաւ անոց կատարած գերին քննութեամբ, բանաստեղծութեան եւ երգին ճամբով, կատարուեցան վերլուծական աշխատանքներ անոց դործերուն, ինչպէս նաեւ յուշագրական եւ կենսագրական ուսումնասիրութիւններ: Զոյգ փառատօները յանուն ժողովուրդին կատարուած, պետական կազմակերպութեամբ եւ հայ հողին վերայ, ժողովուրդին մեծածաւալ մասնակցութեամբ, նպատակ ունէին փառաբանումը ժողովուրդի ծոցէն ելած այդ երկու «ժողովուրդի զաւակ»ներուն, որոնք իրենց կատարած գերին հանդիմութեամբ ալ իրարու հետ եղբայրացած են, ինչպէս ալ իրարու հետ եղբայրացած են Հայրենիքին մէջ, տաք ու խանդավառ պաշտամունքի մը ջերմութեամբ:

Թումանեան Դսեղէն կու գար, Լոռիի լեռներու ծոցէն, բնիկ հայրենական գիւղի զաւակ. Կոմիտաս — Սողոմոն Կուտի-նացին՝ Անատոլիոյ Թրքական գիւղէ մը, բայց հոգւով վերածնած էջմիածնի Գէորգեան ճեմարանին մէջ, գերազանցապէս հայ եւ նուիրուած հայ արուեստին: Երկուքին դործին մէջ ալ ժողովուրդը մը կայ, եւ անոնք՝ արուեստագէտները, անոր կը ծառայեն եւ զայն կը վերարտադրեն անոր ապրումներուն եւ զգացումներուն մէջ: Մեր ժողովուրդը հիմը կը կազմէ աղգային զեղարուեստի մը՝ որ երգ է եւ բանաստեղծութիւն: Թէ՛ Կոմիտաս եւ Թէ՛ Թումանեան այդ ժողովուրդէն առած են իրենց ներշնչումը, զայն վերածնած են կրկին եւ զայն արուեստի ճամբով մեղի հաղորդած: Այս ծառայութեան մէջ է այդ երկու արուեստագէտներու հոգեղբայրութիւնը: Թումանեան եւ Կոմիտաս, բոլորովին տարբեր իրենց ժամանակակիցներէն, անմահ կերպով մերձեցած են հայ երգին եւ հայ բանաստեղծութեան, որովհետեւ երկուքն ալ նոյն անբացատրելի ջերմութեամբ եւ նոյն ոգեւորութեամբ նուիրուած են անոր: Այս զեղեցիկ զուգորդութիւնը, երկու մեծ տաղանդներով յայտնուած՝ հայ երգի եւ հայ բանաստեղծութեան մէջ, այսօր ար-

դարեւ հիացումի առարկայ է. որովհետեւ անոնք զիտցած են զտնել ալը գեղեցկութեան, վճիտ աղբիւրը հայ քնարականութեան՝ դոր մէկը ձայնով, միւսը խօսքով ուղած է արտայայտել: Խորապէս քննելով հարցը՝ ի վերջոյ այս երկուքը կարծէք թէ կը նոյնանան. Կոմիտասի հայ ժողովրդական երգը՝ իր վերջին վերլուծումին մէջ՝ բանաստեղծութիւն մըն է ինքնին, դոր ան կը զգայ, ինչպէս բանաստեղծ մը կը զգայ, տալով յաջորդութեամբ այդ զգացողութեան բոլոր նրբերանգները: Կոմիտասին մենեղները կամ խմբերգները հոգեկան ապրումներ են հայ մշակին, հայ գեղջկուհիին եւ առհասարակ հայ ժողովուրդին, արտայայտուած յաճախ այնպիսի յուզական թրթռացումներով եւ ջերմութեամբ, որ պարզին ու քնքունին հետ կը յայտնուի յանկարծ խոր եւ գունեղ երաժշտականութեամբ, ստեղծուած այն հոսմանիւ թէն որ ժողովուրդէն կու գայ, քաղուած անոր շրթունքներէն: Ահա մեծութիւն մը եւ անձնականութիւն մը, յայտնուած մասնաւորապէս բաղմամբային նորութեան եւ ճոխ զանազանութեան մէջ, որ իր գիւտն է եւ իր ստեղծագործութիւնը: Երբ Տըպիւսի մը, ներկայ ըլլալով Կոմիտասի տուած համերգներուն՝ յայտարարած է զայն «Հայ Վարդատի մը կողմէ կատարուած մեծ յայտնագործութիւն», եւ ուրիշ առթիւ մը՝ «Կը խոնարհիմ ձեր երաժշտական հանճարին առջեւ», եւ կամ նոյն ժամանակ երբ ուրիշներ «Երաժշտական աշխարհի ամէնէն ուշագրաւ երեւոյթ» հռչակած են իր ելոյթը՝ կը կարծենք թէ այդ ամէնը փաստեր են անոր տաղանդին ինքնատուութեան եւ անոր եղանակաւորութիւնի ճոխութեան: Այսպէս կ'արտայայտուէր, ուրեմն, Փարիզ՝ երբ ան, Պերլինէն դարձին, առաջին անգամ ցոյց կու տար աշխարհի՝ մեր երգային ժառանգութիւնը: Այս փառաւոր սկզբնաւորութեան յաջորդեց շուտով քսան տարուան Փիլիքական աններգաշնակութիւն մը, երբ Հայ Վարդատի խելագարօրէն անցուց այդ տարիները ամուլ պարապութեան մէջ: Իր

բաղմակողմանի դործը չգտաւ շատ մը մասերու մէջ իր լրումը: Բայց ինչ ալ ըլլան անոնք, կիսատ, կամ լոկ զաղափար մը քանի մը տողով, միշտ թանկագին նըշխարներն են անդուզական տաղանդին: Յորելինական տարւոյն գեղեցիկ պտուղը եղած է «Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի արուեստի հիմնարկութեան» ձեռնարկը, 12 հատորներու մէջ ամփոփելու Կոմիտասի երկերը: Այս հրատարակութիւնը պիտի պարունակէ վերատպում մը նախապէս տպուած ստեղծագործութիւններուն՝ հանելով իրենց բնագիրներէն, յետոյ երաժշտական կամ աղագրական բնոյթ կրող գործերը, գիտական խաղաղական աշխատանքները, նամակներն ու բանաստեղծութիւնները, վերջապէս այն ամէն ինչ՝ որ հասած է իրմէ: Սիւրբի հայրենասէր անձնաւորութիւններ առաքած են Կոմիտասեան Դիւանի Յանձնախումբին՝ իրենց տրամադրութեան տակ եղած «Թղթերը», ինչպէս ժամանակին կը կոչուէին Կոմիտասեան ձեռագիրները: 100ամեայ յորելեանին ամէնէն գեղեցիկ եւ ամէնէն միտքարական պտուղն է ասիկա:

* * *

Թումանեանի 100ամեակի տօնակատարութեան Համամիութենական Կոմիտէի Նախագահ եղած է Ալեքսէյ Սուրկով, որ բանաստեղծ մըն է եւ Քարտուղար ՍՍՀՄ Գրողներու Միութեան: Յորելեանին առթիւ ուղղած կոչին մէջ կը յայտարարէ հանդիսաւոր կերպով. «Հայ ժողովուրդի մեծ գաւալը, իմ կարծիքով, իր հազար տարեկան գրականութեան մէջ խաղացած է այն դերը, ինչ որ ունի գրականութեան մէջ Կորբի: Ինչպէս Կորբի, նոյնպէս Թումանեան՝ իր ստեղծագործութեամբ ու գործունէութեամբ հայ բաղմադարեան գրականութեան աւանդոյթները միացուց Սովետ. երիտասարդ գրականութեան» («Հայրենիքի ձայն», 24 Սեպտ. 1969): Համեմատութեան եզրը՝ որ Մաքսիմ Կորբին է, կը տարբերի անտարակոյս մեր

Թումանեանէն: Մաքսիմ Կորբի հեղինակ է բանաստեղծութիւններու, պատմուածքներու եւ տրամներու: Անոր գրական համբաւը կապուած է ընկերային յեղափոխութեան զաղափարային շարժումին հետ, տարածուած երկրէն դուրս՝ Եւրոպա եւ Ամերիկա: Այս գծով ուժեղ էր իր ժողովրդականութիւնը: 1900ական թուականներուն արդէն յարած էր Մաքսի գրութեան: Իր «Քաղցեանիներ», «Յատակ» եւ «Թշնամիները» թատերական գործերը բաղմամբիւ բեմերու վրայ հանուած էին եւ բաղմահադար օրինակներով կը սպառէին: «Մայրը» վէպը զանգուածներ ոտքի հանած է: Թումանեան քաղաքական և ընկերային յայտնի վարդապետութիւն մը որդեգրած էր. համաձայն ենք Պ. Մակինցեանի տեսակէտին՝ տեսնելու անոր մէջ անիշխանական մը, այսինքն չէզոք մը. աւելի պարզ՝ նրա համակրանքը ոչ ցարի կողմէն է, ոչ ընկերի: Իր քաղաքական այդ դաւանանքը նա երբեք չի արտայայտել որդեգրելով «Ընտիր գրութիւններ», պէս քաղաքացի» («Ընտիր գրութիւններ», խմբագրութեամբ Պ. Մակինցեանի, Երեւան 1929, էջ 15): Հայ բանաստեղծը խաղաղութեան եւ հաշտութեան մարդն էր. զաղութեան եւ հաշտութեան միշտ ի սէր իր ժողովուրդին, կատարելով միջամտութիւններ ընդմէջ թաթարին եւ Հայուն, ընդմէջ Հայուն եւ Վրացիին: Գիտենք իր նամակներէն, ինչպէս կը մէջընդմէջ Պ. Մակինցեան ալ, որ 1905-1906 ան միջամտեց Հայ-Թաթար ընդհարումներուն՝ խափանելու համար աւելորդ արիւնահեղութիւններ. «Այսօր, կ'ըսէ ան, ես այնքան դոհեմ որ զրականութեան մէջ մի ո'րեւէ բան եմ արել, որքան դոհեմ որ ակներեւ կարողացայ իրար դէմ կանգնած ժողովուրդներին սրերը պատեան դնել տալ» (Անդ, էջ 9): Նոյն հաշտարար ոգին էր որ միութեան կապ դարձաւ, միջազգային պատերազմի աւարտին, հայ հողին ճակատագիրը փոխող յեղափոխական կռիւներու եւ վարչութիւններու փոխանակումի օրերուն, տարուած միշտ հայ ժողովուրդի փրկութեան եւ վերածնունդի տեսլականով: ՀՊԿ-ի Նախագահ՝ բերաւ

իր անվերապահ եւ անձնանուէր դործը՝ կանգնելու համար գետին ինկած եւ ամէն բանի կարօտ հայրենիք մը: 1923ի Մարտ 23ին այդ յոյսով կնքեց իր մահականացուն Մոսկուայի մէջ: Ընդունայն եղած էին բոլոր ճիգերը, 1921ին ունեցած դեղնախտին բուժումէն ետք, ահաւոր քաղցկեղին առաջը առնելու, որ 1922ի ընթացքին յայտնուած էր իր մէջ: Երեւանի Նոր Կառավարութեան որոշումով՝ ան մեկնած էր Պերլին՝ խնամուելու մասնագէտներու ձեռքին տակ, բայց ամէն դիմում, ամէն մարդկային միջոց վերստին կեանք տալու տառապող բանաստեղծին՝ եղած էին անօգուտ փորձեր:

Սերգէյ Գորոդեցիի, բանաստեղծ եւ բարեկամ հայ մեծ բանաստեղծին, կը գրէր անոր մահուան վաղորդայինին. «Բանաստեղծը մեկնեց անմահութիւն: Նրա անունը լայնօրէն յայտնի է ոչ միայն Սովետական եւ ժողովրդագրականութեան երկիրներում, այլ եւ այդ սահմաններից շատ հեռու: Նրա բանաստեղծութիւնները կարգում են սլաւոնական, եւրոպական եւ ասիական լեզուներով: Նրա երգերը երգում են շատ ժողովուրդներ: Նրա պօֆմները օպերաների նիւթ են ծառայել: Ժողովուրդների եղբայրութեան, բարեկամութեան նրա քարոզը օգնում է իրենց մշակոյթի եւ ազատագրութեան համար մարտնչող ժողովուրդներին: Հայ մեծ բանաստեղծը մեկնեց անմահութիւն: Եւ ովքեր նրա առանձնապէս ճանաչելու բերկրանքն են ունեցել, նրա մաքուր, լուսաւոր հոգին, նրա հմայիչ կերպարը, նրա ձայնի հնչումը, նրա ժպիտի շոյանքը սրբօրէն կը պահեն՝ քանի դեռ ապրում են այս աշխարհում» («Թումանեանը ժամանակակիցների յուշերում», Երեւան 1969, էջ 896):

Կովկասեան ժողովուրդներու բարեկամութեան՝ իրարու և ունի ժողովուրդի հետ, եղբայրութեան երգիչի եւ քարոզչի այս տիտղոսը, «ամենայն Հայոց բանաստեղծ»ի տիտղոսին հետ փառապաշար կազմեցին բարեհամբոյր եւ ազնուական նկարագրի տէր Թումանեանին: Ժողո-

